ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի Արմեն Հովհաննիսյանի անվան

Համար 194 հիմնական գպրոց

Պարի ծրագիր

2023-2024 ուստարի

Խմբավար՝ Ազատ Նիկողոսյան

Երևանի Ա.Հովհաննիսյանի անվ.
հմ 194 հիմնական դպրոցի
Տնօրեն՝ Ն. Մանուկյան

Դիմում

Հարգելի պարոն՝ Թորոսյան

Ձեզ եմ ներկայացնում «Պարի»» խմբակի ծրագիրը նախատեսված է դպրոցի բոլոր տարիքային խմբերի համար:

Շաբաթական՝ 2 ժամ , տարեկան՝ 68 ժամ:

Դիմող՝ Ն.Մանուկյան

Ծրագիր

Ժողովրդական պարերի խմբակ

Բացատրագիր

Ժողովրդական պարերի խմբակում սաներն ուսումնասիրում են պարարվեստի զարգացման փուլերը,ոճերը, ժանրերը, կառուցված-քային ձևերը, յուրահատկությունները պատմական զարգացման տարբեր փուլերում , ծանոթանում են հայ մշակույթի գեղարվեստական արժեքներին , ժողովրդական պարերին և ավանդույթներին , ազգային պարերի ակունքներին :

Խմբակի սաները մասնակցում են տարբեր գեղարվեստա-մշակութային միջոցառումներին:Պարարվեստը ուսուցանում է գնահատել գեղեցիկն ու արժևորել արվեստն ու տարբեր ժողովուրդների մշակույթը:

Խմբակի հիմնական խնդիրներն են.

1.Ստեղծել խմբավարի և խմբի մասնակիցների սերտ համագործակցություն ,անխզելի կապ.

2.Նպաստել խմբի կատարողական մակարդակի բարձրացմանը.

3.Նպաստել սաների ազատ ինքնադրսևորմանը բեմի հարթակում կամ տեսախցիկի առջև:

4.Նպաստել ազգային և միջազգային պարի մշակույթի արժևորմանը:

5.Զարգացնել գեղագիտական և երաժշտական կարողությունները:

Նպատակները

1.Ներկայացնել պարարվեստի մշակութային արժեքները ,ժողովրդական ավանդույթները:

2.Ձևավորել պարային ճիշտ և գրագետ շարժումների օգտագործում:

3.Զարգացնել պարարվեստի բնագավառում ստեղծագործական և կազմակերպչական ունակություններ:

4.Նպաստել տաղանդավոր և շնորհալի սաների բացահայտմանը:

5.Արժևորել ազգային և ժողովրդական պարերի մշակույթը:

Վերջնարդյունքները

Խմբակի սաները կարողանան

1.Ազատվել պահվածքի բարդույթներից.

2.Զարգացնել պարային շարժողականության հմտություններ.

3.Ներկայանալ տարբեր ժողովուրդների կերպարներով.

4.Տարբերել և բնութագրել ազգային պարերը.

5.Տարբեր միջավայրերում ներկայացնել ազգային պարի առանձնահատկությունները:

Պահանջվող նյութատեխնիկական բազա

Առանձնացված տարածք ,հայելիներ,վարժանքի ձողափայտեր,շարժական դինամիկ և բեմական հագուստ:

Սույն ծրագրի մշակման համար օգտագործվել են Սրբուհի Լիսիցյան <<Հայկական հինավուրց պարեր >>,Աշխեն Բոյաջյան<<ժող-բնորոշ պար>> գրքերը :

Ներկայացված ծրագրի համար օգտագործվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի նոյեմբերի 1-ի N 76-Լ հրամանի դրույթները:

Ստորև ներկայացված ծրագիրը մշակված է տարրական ընդհանուր կրթական աստիճանում սովորողների համար,մասնավորապես երրորդից

չորրորդ դասարաններում սովորող 8-ից 9-ը տարեկան տարիքային խմբերի համար:

- Շաբաթական 2 ժամ

- 38 շաբաթ

ԹԵՄԱՆԵՐ	ԺԱՄԵՐ
Խմբերի կազմավորում:Պարի ուսուցման ընթացքում անվտանգության տեխնիկայի կանոնների ուսուցում:Ծանոթացում ծրագրին, դասաժամերին,համազգեստի ներկայացվող պահանջներին:	1-3 շաբաթ 6 ժամ
Ծանոթացում ճկունության զարգացման համար նախատեսված ներառական վարժություններին: Կեցվածքին ներկայացվող պահանջներին ներկայացում և ուսուցում:	4-6շաբաթ 6 ժամ
Ռիթմի զարգացում ,մարմնի ճկունության զարգացում,ձեռքի և ոտքի հիմնական դիրքերի ուսուցում:	7-9 շաբաթ 6 ժամ
Նախավարժանք հատակին ,	10-12 շաբաթ

պարային քայլ,մանրուքի ձեռքի վարժանք:	6 ժամ
Դասական պարի էլեմենտներ 1.Պլիե 2.տանդյու բատման 3.տանդյու բատման ժետե 4.ռելևե 5.պորտեբռա	13-15 շաբաթ 6 ժամ
1.Ֆոնդյու 2.ֆռապպե 3.ռոն դե ժամբ պարտեր 4.գրանտ բատման	16-18 շաբաթ 6 ժամ
Դասական դասի կրկնողություն և ամրապնդում:	19-21 շաբաթ 6 ժամ
Հայկական պարերի նախնական տարրերի ուսուցում:Խմբային պարի էլեմենտներ	22-24 շաբաթ 6 ժամ
Ռուսական պարերի նախնական տարրերի ուսուցում. 1.պադեբասկ 2.վերյովոչկա 3.կլյուչիկ Ռուսական պարի զարգացում; Հայկական խմբային պարերի փոքրիկ բեմադրություններ.	25-27 շաբաթ 6 ժամ 28-30 շաբաթ 6 ժամ

Շպագատ,մոստ,թռիչքներ,պտույտներ: Մարմնի , գլխի,ձեռքերի պահվածք: Պարերի կատարման առանձնահատկություններ:	31-33շաբաթ 6 ժամ
Սովորած պարերի կրկնողություն	34-36 շաբաթ 6 ժամ
Բաց դասի պատրաստում և ներկայացում	37-38 շաբաթ 4 ժամ

Ծրագիր

Ժողովրդական պարերի խմբակի

Ստորև ներկայացված ծրագիրը մշակված է հիմնական ընդհանուր կրթական աստիճանում սովորողների համար ,մասնավորապես 5-

ից 9-րդ դասարաններում սովորող 10-14 տարեկան տարիքային խմբերի համար.

Շաբաթական 2 ժամ

38 շաբաթ

Թեմա	ժամեր
Դասական պար :Ճկունության զարգացում:	1-3 Շաբաթ 6 ժամ
Ձեռքի վարժանք,մանրուքի փոփոխական քայլ:	4-6 Շաբաթ 6 ժամ
Էկզերսիզի զարգացում	7-9 շաբաթ 6 ժամ
Հայկական պարերի ու ուսուցում	10-12 շաբաթ 6 ժամ
Ազգային պարերի ուսուցում	13-15 շաբաթ 6 ժամ
Ռուսական պարերի ուսուցում	16-17 շաբաթ 4 ժամ

Հիմնական պարերի ուսուցում	18-19 շաբաթ 4 ժամ
Մոլդովական պարերի ուսուցում	20-21 շաբաթ 4 ժամ
Վրացական պարերի ուսուցում	22-23 շաբաթ 4 ժամ
Աջարական պարերի ուսուցում	24-25 շաբաթ 4 ժամ
Բեմադրական աշխատանքներ՝ շալախո, կինտո	26-28 շաբաթ 6 ժամ
Պարային հնարքներ ,ուսուցման ընթացքում անվտանգության տեխնիկայի կանոնների ուսուցում	29-30 շաբաթ 4 ժամ
Պարային բեմադրություններ՝ 1.Եղեգ 2.Էրզրումի շորոր 3.Սայաթ –Նովա 4.Հոտաղներ 5.Հնձվորներ	31-34 շաբաթ 8 ժամ
Ծրագրի ամրապնդում	35-36 շաբաթ 4 ժամ
Տարեվերջյան համերգի պատրաստում և ներկայացում	37-38 շաբաթ 4 ժամ